ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ <<ԵՐԱՍԽԱՀՈՒՆԻ ՄԱՐՏԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ >> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊ ՈՒԹՅՈՒՆ

Հասցե Արմավիրի մարզ Մեծամոր համայնք
գ. Եղեգնուտ 3-րդ փողոց, 22 շենք
Հեռ. 093-77-02-45
Էլ. Փոստ yeraskhahun@schools.am

<< 29>>հուլիս 2025թ
ՀՀ Արմավիրի մարզպետի
աշխատակազմի գլխավոր քարտուղար
պարոն Ա. Հովհաննիսյանին

Հարգելի՛ պարոն Հովհաննիսյան,

Տեղեկացնում ենք Ձեզ, որ Արմավիրի մարզի << Երասխահունի Մարտիկ Գևորգյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ- ը հայտարարում է մրցույթ << Հայոց պատմություն>> և << Համաշխարհային պատմություն>> /23 ժամ/ առարկաների ուսուցչի թափուր տեղի համար:

Տնօրենի պարտականությունները կատարող *Ա. Գրիգորյան*

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ Արմավիրի մարզի <<Երասխահունի Մ. Գնորգյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ը /նոր հասցե՝ գ. Եղեգնուտ 3-րդ փողոց, 22 շենք / <<Հայոց պատմություն>> և << Համաշխարհային պատմության>> / 23 ժամ/ առարկաների ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի : Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

_Դիմում(Ձև 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

-Բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),

-Անձը հաստատող փաստաթուղթ,

<<Հանրակրթության մասին >> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում)

-ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

-Ինքնակենսագրություն (Ձև 5)

-Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

-Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հաստատող փաստաթղթեր(առկայության դեպքում)

_Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակը վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ , մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերը ընդունվում են 2025 թվականի հուլիսի 29-ից մինչև 2025 թվականի օգոստոսի 13-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2025 թվականի օգոստոսի 15-ին՝ ժամը 14:00-ին << Եղեգնուտի միջնակարգ դպրոց >> 3-րդ փողոց, 22 շենք ՊՈԱԿ-ում :

Հասցե Արմավիրի մարզ Մեծամոր համայնք գ. Եղեգնուտ, 3-րդ փողոց, 22 շենք

Տեղեկությունների համար զանգահարել՝ 093 77 02 45 հեռախոսահամարով: